Հայաստանի ազգային ագրարային համալսարանի գիտական խորհրդի

Որոշում

2017-2018 և 2018-2019 ուստարիների բակալավրի առկա և հեռակա դիպլոմային աշխատանքների (նախագծերի) ուսումնասիրության վերաբերյալ

(արձանագրություն 9.) 16.05.2019թ.

Դիպլոմային աշխատանքների (նախագծերի) թեմաները պետք է պարունակեն կոնկրետ հիմնախնդիրներ, լինեն արդիական և կիրառական, արտադրությունից վերցված, որպեսզի առաջարկությունները կիրառվեն կոնկրետ արտադրությունում:

Զուգահեռներ են անցկացվել այս տարվա և անցած տարվա (2018-2019թթ.) դիպլոմային նախագծերի թեմաների մեջ, նշվել են բազմաթիվ համընկումներ թե՛ թեմաների, և թե՛ ղեկավարների մասով:

Պատահականության սկզբունքով համընկած թեմաներով պաշտպանված դիպլոմային աշխատանքներից (նախագծերից) ընտրվել են մի քանիսը և մանրամասն ուսումնասիրվել, ինչի արդյունքում ի հայտ են բերվել բազմաթիվ նմանություններ:

Դիպլոմային նախագծերում կան բաժիններ, որոնք ուղղակիորեն կապ չունեն դիպլոմային նախագծի թե՛ թեմայի, և թե՛ բովանդակության հետ:

<u>ԽՆԴԻՐՆԵՐ.</u>

1. Թեմաները արդիական չեն:
2. Ծավալները շատ են՝ 170-180 էջ:
3. Ուսումնասիրում են գլոբալ խնդիրներ:
4. Դիպլոմային աշխատանքների (նախագծերի) բաժիններում (թե՛ մոդելավորման, թե՛ շրջակա միջավայրի պահպանության, և թե՛ կենսագործունեության անվտանգություն) հանձնարարված թեմաները հիմնականում չեն համապատասխանում դիպլոմային աշխատանքի թեմային:
5. Շատ մասնագիտությունների գծով տնտեսական հիմնավորումը և շինարարական մասերը կարելի է հանել կամ թեթևացնել:

6. «Եզրակացություններ և առաջարկություններ» բաժինները կրում են տեսական չհիմնավորված բնույթ՝ բարի ցանկությունների մակարդակով:

7. Թեմայի անվանումը չի համընկնում աշխատանքի կառուցվածքի և բովանդակության հետ:

8. Դիպլոմային աշխատանքները (նախագծերը) ստուգվում են ղեկավարի, գրախոսողի, երկուսից ավելի խորհրդատուների կողմից, սակայն նույնպես թերի:

Ելնելով վերոնշյալից գիտական խորհուրդը որոշեց՝

1. Գործընթացում առկա թերությունների վերհանման և որակի բարձրացման նպատակով ձևավորել հանձնաժողով հետևյալ կազմով՝

Ալեյան Անդրանիկ	ուսումնական գործընթացի համակարգման բաժնի վարիչ, նախագահ
Քնաջյան Հակոբ	Կրթական բարեփոխումների բաժնի գլխավոր մասնագետ
Մկրտչյան Հայկ	ուսումնական գործընթացի համակարգման բաժնի գլխավոր մասնագետ
Հովհաննիսյան Արամ	Ագրարային ճարտարագիտության ֆակուլտետի դեկանի տեղակալ
Մամաջանյան Սասուն	Ագրոնոմիական ֆակուլտետի դեկանի տեղակալ
Սարոյան Անահիտ	Պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետի դեկանի տեղակալ
Խաչատրյան Լիանա	Ագրոբիզնեսի և տնտեսագիտության ֆակուլտետի դեկանի տեղակալ
Ծառուկյան Սոնա	Անասնաբուժական-բժշկագիտության և անասնաբուծության ֆակուլտետի դեկանի տեղակալ
Վարդանյան Սիլվի	Իրավաբանական բաժնի իրավաբան

2. **Հանձնաժողովի նախագահին՝**

2.1 Մեկամսյա ժամկետում ուսումնասիրել 2017-2018 և 2018-2019 ուստարիների պաշտպանված դիպլոմային աշխատանքները (նախագծերը):

2.2 Համընկնումները, արտատպումները վերհանել և ներկայացնել գիտական խորհրդի քննարկմանը:

2.3 Գիտական խորհրդի քննարկմանը ներկայացնել համընկնումներով, արտատպումներով դիպլոմային աշխատանքների (նախագծերի) ղեկավարներին և խորհրդատուներին կարգապահական տույժի ենթարկելու հարցը:

<u>Հանձնարարել</u> ֆակուլտետների դեկաններին և ամբիոնների վարիչներին՝

1. 15 օրյա ժամկետում ներկայացնել նորացված դիպլոմային աշխատանքների (նախագծերի) թեմաներ, որոնք պետք է պարունակեն կոնկրետ հիմնախնդիր, լինեն կիրառական, որպեսզի առաջարկությունները կիրառվեն արտադրությունում:

2. Ուսումնական գործընթացի կառավարման վարչության պետ Դ.Հայրապետյանին՝ կատարել փոփոխություններ համապատասխան կանոնակարգերում, կազմել ուղեցույց դիպլոմային աշխատանքների (նախագծերի) կատարման վերաբերյալ:

Գիտ. խորհրդի նախագահ Վ.Ուռուտյան

Գիտ. քարտուղար Դ. Բալասանյան